




Հանրագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱԲԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 15



ՏՄԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Հայ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ HANRAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՐԱԹԱԿԱՆ JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 15 || 12 ԱՊՐԻԼ 1903

ԱՐԿԱԾԸ



Սիրեմբ երթալ ամէն առաւօտ
Այն դարաւանդին գազաթ մացառոտ
Որուն կողերէն՝ հսկայ կիսուածով
Կախուէին ժայռեր ցցուած դէպի ծով :

Արեակ ամուսինս՝ րնկողմանած հո՛ն
Դիսէր ա՛յն բարձրէն ծովն ու հորիզոն ,
Մինչ փոքրիկն Աննա՝ մեր ծիլն անդրանիկ
Թռչքսէր մեր շուրջն իբրեւ քիթունիկ :

Մէկը երազուն պահ մ'իճծի ժպէտ ,
Սիրոյս րդանքներն ամբողջ կողոպտէր ,
Միւսը զիս գգուէր խաղերով անմեղ .
Երջանիկ էի երկուքին մէջսեղ :

Ժայռին կտուրէն ծաղիկ մ'էր բացուած ,
Ծաղիկ մ'իճքնաբոյս կարմիր... ո՛վ Ասուած ,
Քաղել ուզելով՝ անխոհեմաբար
Աննա կը ծրոխ ու զլսորի վար :

Չաւկին ետեւէն՝ Որեակ խելացնոր,
Առանց կռելու վստնզն ահաւոր,
Ինքն ալ խոյանայ սուրայ իբրու նեւ
Ափսոս, անդունդին մէջ կ'ըլլայ անհետ :

Գամուած մնացի . անդամներս ամէն
Պարտուռ մը պատեց, ու այս ցնցումէն
Ցանկարծ արթնցայ ... երազ մ'էր ապուշ ,
Ո՛հ, սակայն որչափ զարթնումս էր անուշ :

Արեակ սրնարիս մօտիկ ինձ ժպէտ ,
Սիրոյս րդանքներն ամբողջ կողոպտէր ,
Աննա շուրջ զիս խաղերով անմեղ .
Երջանիկ էի երկուքին մէջսեղ :

(Անտիպ)

Մ. ԱՃԷՄԵԱՆ

Ազնուաւում Մկրտիչ Էֆ. Անեմեան՝ ժողովրդական ա՛յն հարսգաս յանասեղծը, որուն՝ ընթանեկան կեանքէն ներշնչուելով՝ զծած բարոյալից իսկաւիպ տաւաւները այնքան մեծ հանդիմով կ'ըմբոսխուի, մեր խնդրանքին վրայ, Նոր Կիրակիի առիթով իր անհայոս տանաւորներէն նուէր մը դրկելու ազնուութիւնը կ'ունենայ Հանրագիտակի, զոր շնորհակալութեամբ կը հրատարակենք:

Ճումարիտ հանդիմ մըն է մեզ համար յուսալ քե՛՛ ծերունագարդ քեթրովը՝ որուն կեանքին իտեալն է երգել միտ զգայնորէն, պիտի հանի զարդարել Հանրագիտակի եջերը իր գրական գեղեցիկ անակալներով:

ԿԱՄՔԻՆ ՈՅԺԸ

Մարդս գործ մը կատարելու համար, երեք տեսակ ուժէ կը դրդուի. — Բնագը, սովորութիւն եւ կամք:

Ա. — Բնագը — ինչպէս որ անունէն ալ կ'երեւի — բնածին ճշդաւում մ'է՛ զոր ո՛չ ձեռք կը բերուի, ո՛չ ալ կը զարգանայ եւ ուր խորհրդածութիւնը ո՛չ մի դեր չը կատարեր: Զոր օրինակ ձեռքն երկարել, վտանգի պահուն աչքերը փակել եւ կամ փախչիլ, որոտման կամ պայթման մը միջոցին ձեռքն ականջին տանիլ եւն.։ Ուրեմն բնագըէ մը յառաջ եկած գործողութիւնները մեքենական եւ անբանաւոր են: Անիկա իմացական զարգացման հետ խոտորնակ կը համեմատի:

Բ. — Սովորութիւնը ստէպ կրկնուած գործողութենէ մը կը ծնի եւ ի վերջոյ մեքենական դառնալով՝ կը ձգտի բնագրական վիճակին յանգիլ: Անոր համար ըսած են թէ երկրորդ բնութիւն մ'է:

Սովորութեամբ բան մը ընելը աղէ՞կ է թէ գէշ: Ռուսո եւ Գանդ կ'ըսեն թէ վնասակար է, զի գործ մը կատարուած միջոցին մարդու մը հոգեկան բոլոր կարողութիւնները շարժման մէջ ըլլալու են: Ասի տեսականօրէն ճիշտ է, բայց գործնականին մէջ չէ կարելի ի կիր արկանել, որովհետեւ այն ժամանակ մարդ ստիպուած պիտի լինէր ամէն բան սկիզբէն սկսիլ, առանց օգտուելու իր նախնեաց գիւտերէն. բան մը որ յառաջդիմութեան արգելք պիտի հանդիսանար. միւս կողմէ ամէնաչնչին բաներու վրայ անգամ միտք հոգնեցնելով՝ անկարելի պիտի դառնար այսպիսի ճշգրտեալ եւ կենսամաշ աշխատութեան մը տոկալ:

Սովորութիւնը արդէն անկախ չէ կամքէն. ընդհակառակը ան երկար ատեն յայտնուած դիտաւորութեան մը արդիւնքն է: Ուսուցիչը քաջալերելու է բարի սովորութիւնները, նոյն իսկ ծանրա-

նալու է անոնց վրայ, բայց խոհեմութեամբ եւ միշտ ի նկատի ունենալով մանկան բնաւորութիւնը, «Գաղափար մը, ըսած է Ֆոնթընէլ, փայտ ճեղքելու գործիքի մը կը նմանի, զոր միշտ փոքր ծայրէն ցցելու է»:

Գ.—Կամքը այն կարողութիւնն է որ ազատօրէն եւ գիտակցութեամբ կը կատարէ գործողութիւն մը: Բարոյական ոյժ մ'է ան, որ կ'ազդէ եւ կը հակազդէ, միշտ անկասի: «Կամքը գործունէութեան մէջ եղող միտք մ'է», ըսած է Քոնքեռէ:

Անոր եւ հոգւոյ միւս կարողութիւններուն մէջ մասնաւոր առնչութիւն մը կայ: Այս կերպով առնուած՝ կամքը մեր էութեան ամէնէն կենսական կարողութիւնն է, որովհետեւ ան է որ կը կազմէ մարդու մը ցկարագիւրը: Երբ կ'ըսուի թէ այսինչը նկարագրի աէր մէկն է, այդ կը նշանակէ թէ զօրաւոր կամք մը ունի ան որ առանց յուսահատելու կամ սայթաքելու, հաստատուն կերպով իր նպատակին կը դիմէ:

Կամքը հետեւեալ շորս տարրերէն կը բաղկանայ.

1.—Յղացումը (գաղափարին):

2.—Խորհրդածութիւնը, ուրիշ խօսքով՝ ընելու կամ չընելու խնդիրը:

3.—Որոշումը, կամ գործելու վճիռը:

4.—Գործադրութիւնը, որ նոյն իսկ գործողութիւնն է:

Կամքի կրթութիւնը շատ դժուարին գործ մ'է, որովհետեւ մասնաւոր նրբին դատում մը եւ կենցաղավարութիւն կը պահանջէ դասատուէն: Վարժարանին մէջ աշակերտներէն բոլորն ալ միեւնոյն խմորով շաղախուած չեն. ոմանց սրտին կոչում ընելու է ուրիշներու՝ իմացականութեանը, մի քանիներու ալ պատուոյ զգացումին: Դարձեալ, կան մանուկներ, զորս քաղցրութեամբ համոզելու է, ուրիշներ, ընդհակառակը, խստութենէն միայն կ'ազդուին: Պմանք երկիւղած կ'ըլլան, ոմանք ոչ. ոմանք ի ծնէ հոգւոյ տեսակ մը վեհանձնութիւն կ'ունենան, որուն կարելի է կոչում ընել: Ամէն պարագայի մէջ տղունտ արիքն ալ նկատի առնելու է:

Համեմատաբար դիւրին է կատարել տալ տղու մը այն բաները որ իրեն հաճելի են. սակայն երբ հարկ կ'ըլլայ՝ հակառակ իր ճաշակին եւ խառնուածքին, ճշմարիտ պարտականութեան ճամբուն մէջ քալեցնել զայն, ահա հո՞գ է որ կը ծագի գլխաւոր դժուարութիւնը:

Ի՞նչպէս ուրեմն կրթելու է կամքը որպէսզի տղայք դժուարութեանց առջեւ չը կասին եւ կարող ըլլան դիմադրել ամէն տեսակ փորձութեանց:

Ա. Նախ զգուշանալու է որ կամքը չը ջլատուի: Պէտք է առաջնորդել զայն եւ ոչ թէ ջախջախել:

Բ. Մանուկը այնպէս ներշնչուած ըլլալու է որ կարողանայ հասկնալ իր գործած մէկ արարքին բարոյական նշանակութիւնը, այդ մասին իր գաղափարները յստակ ըլլալու են, իր խղճի եւ դատողութեան կազմութենէն միայն կախում ունի բարւոյ և չարի ճանաչումը:

Գ. Լաւ է որ մանուկը ազատ ձգուի յաճախ, ինքնիրեն գըտնելու համար հանդարտ և խռովեալ հոգիի մը մէջ գտնուած տարբերութիւնը: Դաստիարակութիւնը հոն է որ կը հսկէ իւրաքանչիւր արարքէն բարոյական դասեր հանելու համար:

Դ. Որովհետեւ պզտիկները տեսակ մը բնածին հակում ունին դէպի նմանողութիւնը, կարելի է օգուտ քաղել իրենց յայդ տրամադրութենէն, մղելու համար զանոնք, որպէսզի հաստատամտօրէն յառաջանան այն ուղիէն, որ դէպի իրենց իտէալը կ'առաջնորդէ: Այս սահմանին մէջ պատմութիւնը, կենսագրութիւնն մեծ մարդոց, ինչպէս Աննիպալ, Նանգէն, Կարֆիլտ, Ֆրանքլին, Բասթօր, Կալիլէ, Էլն., եւ նոյն իսկ ուսուցչին տուած օրինակը խիստ մեծ օգուտ կրնան ունենալ:

Ե. Անհնազանդութեան համար տրուած պատիժները խորհրդածել կուտան տղուն: Որպէս զի անոնց ազդեցութիւնը բարի ըլլայ, պէտք է որ ուղղամտօրէն տնօրինուին անոնք եւ գործածուած յանցանքին հետ առնչութիւն ունենան:

ԱՐՄԷՆ ՅԱՐԶԱՏ

Վկայեալ Զուրիգ. Մակավարժ. Դպրոցէն

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԶԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՄԷՁ

45. Եթէ կեանքիս մեզ միայնակ ծերանամ

Ամէն կին ընտանիք չկազմեր: Ամէն կին ամուսին և որդի չունենար խնամելու: Կան որ կը ծերանան իրենց ծնողքին մօտ և երբ անոնցմէ ալ զրկուին, մինակ պիտի մնան: Ասոնք պառուած աղջիկներ կ'անուանուին: Տղաս, մատաղատի դպրոցական, ո՞վ կ'ապահովցնէ քեզ թէ դուն ալ օր մը պառուած աղջիկ պիտի չդառնաս:

Եթէ պարագաները այսպէս վճռեն քու կեանքը, յիշէ՛, որ մինակ լինելուդ համար իրաւունք չունիս անձնասէր ըլլալ: Բարութեան, անձնութեան, մարդասիրութեան, ազնուութեան և ընկերսիրութեան պարտականութիւնները տիեզերական են: Ընտանիք չունենալով, քրոջ քաղցր պարտականութիւնը կատարելու պիտի նուիրես զքեզ, թշուառներուն քով բարեսէր, գործունեայ և մարդասէր քրոջ դերը պիտի կատարես: Եթէ կեանքդ ապահովելու համար պիտի աշխատիս, աշխատէ՛ ինքնաճերուն համար, անժառանգներուն համար: Ընտանեզուրկ կինը կրնայ իր սիրտն ամբողջովին նուիրել տառապալներոոն: Այսպէսով իր կեանքը գործունեութեան մեջ կ'ըլլայ եւ վիճար կը հեռանայ անկից:

46. Իմ առաջադրութիւններս

Ահա թէ ինչ ընել կը փափաքիմ կեանքիս մէջ:

Կը փափաքիմ սիրել իմ պարսկանութիւնս, որովհետեւ պարտականութիւնը սիրել, Աստուած սիրել ըսել է:

Կը փափաքիմ աշխատութեան յարիլ, և չանցնել օրս գոնէ մէկ ժամ առանց օգտակար բան մ'ընելու:

Կը փափաքիմ զիս Երջայասողները երջանկացնել, եթէ պէտք լինի անձնական հաճոյքս մոռնալով զանոնք երջանկացնելու համար:

Կը փափաքիմ գործս ամբողջ կատարել և միշտ ուրախութեամբ ընել զայն:

Կը փափաքեմ շուրջմ բարիք ընել, խորհիլ անոնց վրայ որոնք կը տուտապին և ինձմէ աւելի քիչ ունին: Իւրաքանչիւրին պիտոյ տամ ինչ որ անոնց պէտք է:

Կը փափաքիմ լաւ աւակերտուի մը ըլլալ, յետոյ պատուաւոր փոքր աղջիկ մը և ապա պատուաւոր կին մը:

Կը փափաքիմ ամեն օր ինքզինքս կատարելագործել:

47. Մարմնոյն մաքրութիւնը

Միթէ՞ պչրանքի համար է, որ յաճախ ձեռքերնիս, երեսներնիս կը լուանք, եղունգներնիս կը մաքրենք, մազե՛րնիս կը սանտրենք, բաղնիք կ'երթանք և հագուստներնիս կը խողանակենք: Ո՛չ, պչրանքը բնաւ դործ չունի այս անհրաժեշտ խնամքներուն մէջ, որ ի գործ կը դնենք մաքրութեան համար:

Եթէ կը փափաքինք, որ մեր մարմինը եւ զգեստները մաքուր ըլլան այն յարգանքին համար ե, որ մեզ կը ցածեմք դէպի

մեր անձր եւ. դեպի մեր հոգին, որ կը բնակի անոր մէջ և որ սերտ կերպով կապուած է անոր հետ: Մեր մարմինը պատուելով կը ծառայենք մեր հոգոյն օգտին. որ կը գործածէ մարմինը իբր ծառայ: Ո՞վ կրնայ աղտոտ և անհաճոյ ծառայ մը պահել: Ի՞նչ պիտի կարծիք կարելի է կազմել այնպիսիներուն վրայ, որոնք կը հանդուրժեն այսպէս բանի:

Զմեզ մաքուր պահելով, մեզ տեսնողներուն յարգանք և ակնածութիւն կը ներշնչենք, և անոնց համակրանքը կը գրաւենք: Վերջապէս մաքրութիւնը շատ հիւանդութիւններէ կ'ազատէ: Փոքրիկ աղջիկ, մաքուր եղիւր առանց պշրանքի: Այս դիւրին է, շուրը ձրի է և օճառը թանգ չէ:

48. Մի որոնք հանոյդ՝ ուսել խմելու մեջ

Անցեալ օր, Էօթէնիին տունը հանդէս կար: Իր ծննդեան տարեդարձին պատճառաւ, մայրը անոր փոքրիկ ընկերներէն շատերը հրաւիրած էր իրեն հետ ճաշելու համար: Պատրաստած էին քաղցրահամ անուշեղէններ, պտուղներ, կարկանդակներ, ամէն տեսակ շաքարեղէններ: Էօթէնի, որ որկրամուլ էր, այնչափ կերաւ, այնչափ, որ հանդէսին կէսին հիւանդացաւ և պէտք եղաւ զայն հանուեցնել, անկողին դնել և դեբ խմցնել, մինչդեռ իր փոքրիկ բարեկամուհիները պարտէզը կը պարէին:

Այս պատմութիւնը միակը չէ իր տեսակին մէջ: Որչափ անգամ այսպիսի բաներ ձեզ պատահած են կամ կը պատահին: Դուք ժուժկալ եղած չէք, ընդհակառակը որկրամուլ եղած էք և ձեր միտքը ինչպէս և ձեր մարմինը անոր համար նեղուած է:

Վարժուեցե՛ք ուսել հիշատակի այնչափ որչափ հստակութեամբ և ձեր ախորժակը գոհացնելու համար: Կերակուրը թէ լաւ ըլլայ թէ գէշ, ձեր ստամոքսները միշտ միեւնոյն քանակութեամբ կը պարունակեն և միշտ ի վնաս ձեր առողջութեան է, երբ հարկաւոր չափը կ'անցնէք:

Ժուժկալութիւնը չժանրաբեռներ միտքը և մարմինը առողջ կը մնայ: Առանց ժուժկալութեան կենդանիներու դասակարգին կը հաւասարիցն:

49. Տեսեալ սորվիցն

Թերեւս ըսէք, «տնտեսութիւնը ինձ չվերաբերիր, որովհետեւ ոչ ստակ ունիմ և ոչ ուրիշ բան մը». կը մոռնաք, որ նոյն իսկ այն պայմանին մէջ, ուր կը գտնուիք, կրնաք տնտեսել: Հա-

գուտներ չունի՞ք, որոց տեղ պէտք է շինել երբ մաշին, տետ-
րակներ, գրքեր, որ պէտք է նորոգուին երբ վերջանան:

Աշխատեցե՛ք, որքան կարելի է՝ ձեր հագուստները երկար ասե՛ն
դիմանան: Զգուշացէ՛ք ասդին անդին չքսքրտել, որպէս զի
չպատուտի և բիծեր չըլլայ: Հոգ տարէ՛ք, որ ձեր դպրոցական
պիտոյքները երկար տեւեն, ձեր գրքերը չաղտոտէք և ձեր տետ-
րակներուն թերթերը չպատռէք: Եթէ մէկ ամիսէ ետք, այսպէ-
սով մէկ երկու տետրակի գին տնտեսէք (որ ձեզ շատ քիչ բան
կը թուի) և շարունակէք այսպէս ամէն ամիս, դպրոցական տա-
րիէն վերջ, պիտի տեսնէք, որ ձեր տնտեսածը դահեկաններ
կազմած է:

Մտաբերեցէ՛ք, որ ցնցեսա՛ծ դրամներով կարելի է նոյն իսկ
մարդասիրական գործեր ընել:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏ

Հեռու՛ն, հորիզոնին միապաղաղ երկարաճգումին մօտ, արեւը
կը փայլի մեղմագին՝ բեկբեկուն ճաճանչներուն մէջ հեւքոտ: Իր
օրուան չըջանը կատարած, հեղի՛կ, հեղի՛կ, կը ծփայ ան վեր-
ջալոյսի աղօտ լուսաւորութեան մէջ պճպճացող բլուրներուն կըռ-
նակն ի վար՝ պահ մը «իւր մօր գրկին մէջ հանգչելու» հանդարտիկ:


Օրօր, օրօր, օրօր, անդաստակին վրայ, օրօրոց-աթոռին մէջ
հեշտօրօր, հանգիստ և հանդարտ կը նստի հանին մտածումներու
ծոցին մէջ թաղուած խաղաղիկ, ու երազկոտ աչքերով արեւին
մուտքը կը գիտէ շառագոյն: Իրիկուան զուարթ զեփիւռներ կը
ճլուրջան անոր ձիւնազարդ վարսերուն մէջ վէտ ի վէտ, որուն
վրայ ոսկեգունակ շիկութիւն մը կը տեսնես, փունջ մը չէկ մա-
զերու որ ոսկեշար պսակի մը ձեւն ունի հանին գլխուն վրայ
զետեղուած, մինչ ան կը նստի աթոռին վրայ խոհուն, վեհաշուք:

Իր անցեալին մէջ հանին ալ արեւ մըն էր ճաճանչաւէտ, լա-
րեւ մը որ լոյս և հուր կ'արծարծէր համասփիւռ, եւ որուն մէջ
կեանքն ու զօրութիւնը ինքնաբուղիս աղբիւրներ էին անսպառ:
Անոր քղանցքին ծալքերուն տակ համեստութիւն կը նիւրհէր, ա-
նոր գանկին մէջ գործօն ուղեղ մը կը խայտար, Բայց հիմայ ծե-
րացած է հանին: Հեղիկ հեղիկ սահած են անոր կեանքի՝ ըռպէ-
ները, բեղմնաւոր ըռպէներ որոնք հաց եղած են քաղցեալներու,
եւ օրհնութիւն՝ թշուառներու: Օրհնեալ ըլլայ հանին:

Եւ հիմա նստած է հանին, գարնան երկինքի ջինջ կապոյ-
տին մէջ խայտացող լուսաւոր ամպերուն առջնիւթեր ու կը հիա-
նայ իրիկնամուտի այս դիւթիչ տեսարանին վրայ: Մերթ տար-

տամ նայուածքներ կ'ուղղէ ան ամպերուն կարմրօրակ, մերթ խորութիւնը կը դիտէ անսահման կապոյտին :

Կը զարմանամ. հանին ի՞նչ տեսնել կը ցանկայ երկինքի այդ ծալքերուն մէջ անծիր • արդեօք պատկերներ՝ լուսաշող ու փայ-



լուն . Յորոնք կ'այլափոխեն ու կ'անհետանան հեռուն, ծառերու խտացեալ շարքերէն ալ հեռուն . Պարեգական մուտքին հետ անձկագին :

— Փայլուն ճամբայ մը որ զինքը օրհնութեան բնակարանը առաջնորդէ, ուր անձկալից հոգիներ հանգիստ կը գտնեն անմահ օրերու մէջ յաւէտ :

Գօնեա

Տ. Յ. ՏԻԼԿԵՐԵԱՆ

ԲՈՒՆ

(ԱՒԱՆԴԱՎԷՊ)

Տաք կապոյտներն են եղեր՝ կապոյտները երկնքին՝
 Միշտ կրակուած հմայքոտ, Թովչուհիի մ'պէս Թովոդ.
 Յուզմունքներն հոն ամպային կ'այրին եղեր հեշտագին,
 Ինչպէս բոցերն ծծումբի՝ լայնութեան մէջ Խաւ մարզին:
 Լեռներ, ծովեր՝ վայրենի նայուածքներու տակ ժպտող,
 Կանաչ ծառեր հոլաթել ու կոյս ժայռեր վիթխարի,
 Կ'այրին եղեր անխռով, լուրթ կապոյտին տակ հսկող.
 Անզաղտնապահ սակայն միշտ մանուկներու պէս պզտի:
 Շարք մը փայտեայ տուններու լեռներու մէջ, փլփլած,
 Պառաւելներու աչքին պէս լուռ կը խոկան անհամբեր՝
 Իրենց Պսակներն ծանրաքայլ՝ ջուրերուն դէմ ուռեցած,
 Արագիլներ ժայռերու զազաթներն են հաստատուեր:
 Գետակ մ'անսիրտ պտուտքող կ'անցնէր զիւղին քովերէն,
 Փլցնելով անտարբէր երբեմն գեղջուկ խրճիթներ:
 Երեք եղբարք սիրավառ կ'ուզեն շինել քարաշէն
 Կամուրջ մ'հսկայ իբրեւ Թումբ, արդի ծեւէն շատ տարբեր:

* *

Կապոյտին տակ Թարմ ու սուրբ, արեւին դէմ ծիրանի,
 Կրակ ոյժով դիւցազնի, խոր ջանքերով աղէխարջ,
 Կը հիւսէին անդադար քարերն հսկայ ապառաժ.
 Փլաւ սակայն այն անխիղճն խուլ ծայներով կատաղի:
 Կապոյտ երկինքն էր կարծես փլուզն՝ անհիմ ու անհուն.
 Լերկ ժայռերը ծերունի՝ անկապ ամպերն համբուրող:
 Ծիծաղեցան հոն ծառերն, ժայռերն, լեռներն խսկ կանգուն,
 Խօլ բաղձանքին վրայ այդ՝ սուրբ մարքերու անխռով.
 Սեւ արծազանքը Թաւ հեռուն, հեռուն շատ հեռուն,
 Սակայն ամէնն լուցին կէս մը ապշած ու խռով.

* *

Լերանց որդիքն յուսով պերճ նորէն հիւսել սկսան
 Քարերն հսկայ, վիթխարի, անցքին վրայ գետակին:
 Երկրորդ անգամ երկրորդ յոյսն էր բռնկած սրտերին,
 Ժժպտով համդարտ, միամիտ, յոյսին վրայ բազմեցան:
 Կը հիւսէին անդադար քարերն հսկայ ապառաժ.
 Փլաւ սակայն այն անխիղճն կատակներով խօլական.
 Ազատ քրքիչ մ'սարսըռուն դուրս ժայթքելով սրտաշարժ.
 Ծափող կարկաչն ջուրերու՝ ալ խռոված ու վայրագ,
 Արցունքի լայն հեղեղի մը պէս կ'անցնէր ճլճուն:
 Ժայռին, լեռներն յաղթական կը դիտէին հոն կանգուն,
 Աւերակներն ցիր ու ցան ջուրերուն մէջ խեղկատակ:
 Շատ շատ օրեր տեւեցին չարչրկումներն այս կեանքի:
 Տժգուներ էր ալ կապոյտն՝ աչքերնուն դէմ Թափառող.
 Յոյսն էր Թռեր յափրացած խռովքներէն յուզումի:
 Յուրտ ցուրտ հովեր վայրենի կ'արշաւէին ինչպէս դող:

Թարմ ծառերուն տակ կանաչ, ստուերներուն տակ մարած,
երեք եղբարք սրտավառ, ջինջ առտու մը արևուտ,
Վերջին հնարքն, է՛ն վերջէն կը խորհէին գոնեւ շուտ.
Խռովքներու խաղալիք եղած էին ու զգուած:

Պաղ նայուածք մը երկնցուց հեռուն, հեռուն, կապոյտին
երէց եղբայրն խորհոտ, երազներով սոսկ տաքցած.
Ոսկի խորհուրդ մ'էր Թառեր կրակ գանկին մէջ առկայծ
Կը դողդղար, կը հեւար, գիւտ մ'էր ըրեր ալ վերջին.
Խորհուրդ տուաւ իր կնոջ 'Լ եղբօր կնկան իր երկրորդ.
Ձգերել ճաշն ցերեկի, այլ բերել տալ իրենց պզտիկ
Ներոյ, որպէս զի նա հիմ դնեն հսկայ կամուրջին:

* * *

Առտու մըն էր ամառուան, ջինջ առտու մը ծիրանի,
Հարսն այն սիրուն դիցուհւոյ մը պէս աղւոր ու ճերմակ,
Թարմ երեսով ծիծաղկոտ, խոր նայուածքով հրեշտակի
Կը տանէր ճաշն, միամիտ, ճորճալով ու հանդարտ,
Կանաչներու մէջերէն ցատկաւորով միայնակ,
Նախանձ կ'ազդէր ամէնուն, ծաղիկներուն իսկ վայր:

Քար կտրեցաւ ու Թոժով կը դողդղար կաշկանդուն
Ամուսինն իր միամիտ, զաղտնիքներու անտեղեակ.
Ինչպէս հիւանդ մը ծարաւ կարմիրներով անեցուն՝
Լուռ կը նայէր իր կնկան ծաղիկ մարմնոյն սպիտակ.
Դիակնացաւ, սառեցաւ մոմիայի մը պէս դեղնած,
Երբ բռնեցին զայն իսկոյն ու հիմ դրին կամուրջին:
Կը հիւսէին անդադար քարերն հսկայ լայնատարած,
Ու յաղթ կանգնած էր հսկան որսին վրայ իր անգին:

* * *


Կը ճգմուէր, կը սմբէր, մօր սիրտն համբոյր ու մաքուր,
Գրկած Թոռնիկն իր սիրուն, արցունքներուն դէմ տղուն:
Ձիկար աղջիկն իր աղու որ, Լեռներուն մէջ Թաքթաքուր
Պիտի մնար յաւիտեան, խուլ իր մանկան լացերուն:

Գրկած Թոռն իր կէս մ'հիւանդ, Թափառեցաւ լերանց մէջ,
Կանչելով իր աղջկան, հասաւ քովն այն կամուրջին.

« Շուշան, Տուրան, կա՞ս մի չիկա՞ս ».

— Մայրի՛կ, կասկամ ըլլաս տէ լեռները իյնաս,
Գոչեց մի ժայն ողբական կամարներուն տակէն պերճ:
Թեւեր առաւ Թռչունի, մայրիկն անուշ դարձած հէք,
Եղաւ Թռչունն ողբածայն, բուն Թափառկոտ միշտ զուշակ:
Ատաբազար

ԿԱՐԷՆ



ՅՈՐԵՆԻ ՀԱՍԿԵՐԸ

Օր մը, ուշ ժամանակ, երբ Յիսուս Քրիստոս կը ճամբորդէր Գալիլիայի մէջ, գիշերը վրայ կը հասնի. կը փնտռէ անդին աս-դին՝ տուն մը, խրճիթ մը ուր կարող ըլլայ ապաստանարան մը գտնել, բայց ամէն տեղ ամայութիւն. բոլոր դռներն ալ գոց էին, բոլոր լոյսերը մարած եւ բնակիչներն ալ խոր քունի մէջ: Միայն փողոցի մը ծայրէն կ'իմացուէր թակի մը աղմուկը՝ որով ցորեն կը ծեծէին, և այնտեղ պղտիկ լոյս մը կը պլպլար: Մեր Տէրը դէպի այդ կողմը կ'երթայ, խրճիթին քով կը հասնի ու դուռը կը զարնէ: Գիւղացի մը կուգայ բանալ:

— Կը հաճի՞ք, կ'ըսէ անոր Յիսուս, մինակ այս գիշերուան համար պառկելու տեղ մը չնորհել ինծի. ամենեւին չպիտի զղջաք: Յետոյ կ'աւելցնէ.

— Ամէն մարդ պառկած է, դուք ինչո՞ւ այս ժամանակ կ'աշխատիք:

— Աւա՛ղ, կը պատասխանէ գիւղացին. երէկ իմ մէկ պարտասկանջս սպառնաց զիս բանտ նետել՝ եթէ չվճարեմ ունեցած պարտքս: Ասոր համար է որ ես, կինս ու տղաքներս կ'աշխատինք գիշերանց ծեծելու այս ցորենը, որպէս զի ծախենք եւ պարտքերնիս վճարենք: Ասկէ վերջը մեզի բան մը չպիտի մնայ, եւ չեմ գիտեր թէ ձմեռը ի՞նչպէս պիտի անցնենք: Բայց Աստուած մեծ է:

Այս խօսքերն ըսելով՝ գիւղացին թեզանիքովը ճակտին քըրտինքը կը սրբէր և ձեռքովը կը ծածկէր արտասուալից աչքերն: Յիսուս գթաց անոնց վրայ և ըսաւ:

— Մի՛ յուսահատիր ազնիւ մարդ: Քեզմէ հիւրասիրութիւն խնդրելով՝ ըսի որ բնաւ չպիտի զղջաս զայն չնորհելուդ: Հիմա պիտի տեսնես:

Եւ Յիսուս առաւ կանթեղն որ կախուած էր խրճիթին մէկ գերանէն, ու պատին մօտեցաւ:

— Ի՛նչ կ'ընէք, պօռացին աշխատաւորները սարսափելով, ամէն բան պիտի այրէք:

Բայց՝ միեւնոյն վայրկեանին, այն յարդին՝ որուն այրելուն համար կը դողային, իւրաքանչիւր հասկէն իջաւ անձրեւ մը ցորենի հրաշալի հատիկներու: Գիւղացիները, սոյն հրաշքը տեսնելուն՝ ծունգի վրայ ինկան ապշած:

— Որովհետեւ դուն ողորմած եղար, ըսաւ Յիսուս Քրիստոս, որովհետեւ քու աղքատութեանդ մէջ ընդունեցիր այն օտարականը

որ քեզի կուգար ողորմելի մուրացկանի մը պէս, պիտի վարձատրուիս: Աստուած է որ քու խրճիթդ մտաւ և Անիկա է որ քեզի պիտի հարստացնէ:

Եւ խելոյն անհետացաւ:

Ամբողջ գիշերը չդադրեցաւ ցորենի հատիկներու անձրեւը, ու հետեւեալ առտուն տեսան որ խոշոր դէզ մըն էր եղած, եկեղեցիին չափ բարձր:

Գիւղացիին իր պարտքերը վճարեց, ուրիշ հոգեր գնեց ու գեղեցիկ տուն մը շինել տուաւ: Հարուստ էր՝ հպարտ եղաւ, քարասիրտ խեղճ աղքատներուն նկատմամբ: Ինք ու իր զաւակները շուայլութեան մէջ թաղուեցան, ինքզինքնին ամէն տեսակ յոռութիւններու տուին, մինչեւ որ բոլորովին կործանեցան: Եւ որովհետեւ ոչ մէկու մը օգնած էին իրենց հարստութեան ժամանակ, ոչ ոք անոնց երեսը նայեցաւ ու գթաց խեղճութեան մէջ:

Իրիկուն մը, ծեր գիւղացիին, չափէն աւելի խմած ըլլալով՝ մտաւ ցորենի շտեմարանը, և յիշելով այն հրաշքը որ զինքը հարստացուցած էր, կարծեց թէ ինքն ալ կրնայ նոյնը կատարել: Առաւ կանթեղը, որայի մը մօտեցուց, կրակ տուաւ, իր տունն ու ինչ որ ունէր բոլորովին այրեցան և ինքն ու իր զաւակները մեռան յետին թշուառութեան մէջ:

ԱՄԱՍԻԱ

Քաղաքներ կան՝ որոնցմէ ոմաք իրենց դիրքովը նստուկ մարդու գիրք առած են, ոմանք ընկողմանած լեռան մը կուշտին վրայ, ոմանք ալ բոլորովին կռնակնուն վրայ ոտքերնին երկայն տարածած: Ահա այս վերջին կարգէն է Ամասիա, որու երկու կողմը երկնցած են գիրար խաչխոյ, յաւիտենական հսկայ սեւ ապառաժները հիւսիսէն-հարաւ, որոնք իբր ամուր պարիսպներ կը գրկեն քաղաքը իրենց ծոցին մէջ:

Քաղաքին մէջտեղէն կ'անցնի Իրիսի գետը, միապաղաղ պղտոր և քիչ անգամ իրաւամբ Սեօիլ անունը արդարացնող անոյշ կանաչութիւնով՝ օձասողիկ կ'ընթանայ երկու անհաւասար ափերու բաժնելով քաղաքը իր բնակարաններովն ու քաղաքին ծայրը պարտէզներով ու այգիներով: Ստրաբոնի (պատմիչ) ծննդավայրը Ամասիա՝ իր շատ մը առաւելութիւններուն հետ՝ պատմական հին քաղաք մըն է, որուն կենդանի յիշատակարանները աչքի կը զարնեն ամէնէն առաջ հսկայ, հինաւուրց ցցուած ժայռերուն վրայ փորուած գերեզմաններու քարայրներն ու բերդին աւերակները: Ստրաբոն՝ ասկից գրեթէ երկու հազար տարի առաջ այս հնութիւններուն վրայէն անձամբ կոխած անցած ըլլալով՝ անոնց ե'րբ շինուիլը յայտնի չըլլալը կը հաւատէ:

Քաղաք մը որ այնքան հնախոյզներու ուսումնասիրութեան արժանի եղած է իր բազմապիսի հնութիւններովը, որոնց ամէն տեղ, ամէն քայլափոխիդ կը հանդիպիս փողոցին մէջ, շուկան, թաղերը, լեռներուն վրայ, բլուրներուն կողը, այգիներուն քովիկը, պատերուն վրայ, աղբիւրներուն վերեւը, հոս հոն արձանագրութիւններ, յիշատակերաններ, քանդակներ, գերեզմանաքարեր, և դեռ չեմ գիտեր ինչե՛ր. որոնք իրենց լռիկ ցուցադրութիւններուն մէջէն ինչեր կ'ըսեն, յիշել կուտան անցեալ դարերու հսկայագործ աշխատութիւններուն վրայով:

Առաջին անգամ, ժայռերէ պարուրուած ու սեղմուած երկայն ձորի մը գիրքին մէջ Ամասիա այցելող մէկու մը տպաւորութիւնը շատ աղուոր սրամտութիւնով մը արտայայտուած է սա տողերուն ներքեւ. « Մարդ Ամասիոյ փողոցները պտտած պահուն անգամ կը կարծէ թէ իր տան բակին մէջ կը քայլէ »: Այնքան սեղմիւ գրկած են լեռները իրենց մէջ Ամասիայի հանդարտաբարոյ ժողովուրդը: Պարագայ մը որ միջավայրի ազդեցութեան տեսակէտով ալ իր մասնաւոր նշանակութիւնը ունեցած է ընդհանուր բընակչութեան վրայ առհասարակ, Ամասիացիք ինքնավիտի, հաստատամիտ ժողովուրդ մը եղած են ամէն կերպով: Պահպանողականութիւնը տիրած է չըջակոյ քաղաքներէն աւելի, իր բոլոր բարքերուն, նկարագրին սարքերուն մէջ՝ ճիշտ իրենց աչքերուն առջեւ շարունակ ցցուած ամրակուռ ժայռերուն պէս, հորիզոնի անբաւութենէն զուրկ:

Ամասիա՝ հակադրութիւններու քաղաքն է: Մէկ կողմէն հըսկայ, վսեմ ժայռերը իրենց յերկ ու մերկ սեւութիւններովը սոսկումի ու արհաւիրքի սարսուռով կը պարուրեն հոգիդ, միւս կողմէն անոնց կողերուն ու ստորոտին վրայ ցիրուցան փռուած ողկուղարեր այգիներն ու միսկէթի անմահարոյր խնձորենիներուն եւ մակոտ կարմիր-ճերմակ կեռասենիներու պարտէզները գեղեցկին ու հաճոյքին անհուն վայելքները ըմբռնել կուտան հոգիդ ու մարմինդ:

Ոգեւորութեան, կեանքոտ զանազանութեան, կենդանութեան քաղաքն է Ամասիա: Բարձրադիր լեռան կատարէն մինչեւ ստորոտը. իրարմէ յանկուցիչ, հակադիր տեսարաններ կը պարզուին աչքիդ, ամէն մէկ քայլափոխի, կեցուածքի սուջեւ: Քայլ մը վեր՝ տեսարանը կը փոխուի. քիչ մը անդին նոյնը չես գրոտներ, աւելի չքնաղ երեւոյթ մը առած է: Հապա՛ իրիսը, Ամասիոյ հարստութեան գլխաւոր աղբիւրն ու հոգին, իր երբեմնի պղտոր հեղեղներովը, երբեմն ուժգին, երբեմն հանդարտ, մանաւանդ իր վրայ յայտնաբար շարքով մը դարձող ջրհաններուն ու աղօրիքներուն ճունչիւններովը ոգեւորութիւնը, կենդանութիւնը կը յատկանշեն: Շարժումի, գործունէութեան, կեանքի երեւոյթները գարծնական մարդը կը պատրաստեն: Ժողովուրդը, էրկիմարդ, կնիկ մարդ, տղայ, աղջիկ գործի մէջ է, ամառը, ձմեռը, միշտ, ամէն ատեն:

Ամասիա, կլիմայի, բուսականութեան տեսակէտով ալ նշանակելի է: Ամրան առողջարար տաքը եւ ձմրան բարեխառնութիւնը ծովէն հազիւ 1378 ոտք բարձրութիւնովը, իրիսի ոռոգող ջրերուն

հետ ճոխ բուսականութիւն մը կ'աճեցնեն քաղաքին երկայքն ի վար դէպ հիւսիս եւ հարաւ քանի մը ժամերու տեւողութիւնով : Չմիայն մէջ անգամ կարելի է կանաչեղէններ գտնել : Բերքերէն՝ կարմրավարդ ջրլի ձմերուկը, քաղցրահամ սեխը, լոլիկը, սմբուկը, մսկոտ կեռասը, սաթի գոյն խոշոր հոտաւէտ սերկեւիլը, սալորն ու խաղողը չրջակայ քաղաքներէն մինչեւ Սամսոն խակ միակէթի անմահաբոյր, կարմրուկ խնձորները, ընկոյզը, պամիան եւ խոզակը մինչեւ Պոլիս եւ Եւրոպա ճամբայ ունին : Իրիսը գլխաւորաբար երկու աղբիւր դարձած է Ամասիոյ արտադրութեան համար : Իր վրայ դարձող աղօրիքներուն եւ իր եղերքներուն վրայ հասցուցած թթաստաններուն շնորհիւ, որոնք ամէնէն կտրեւոր որ շահաբեր զբաղումները կը կազմեն ժողովուրդին մէկ կարեւոր մասին համար, եւ գլխաւոր արտածութիւնը կը գառնայ ալիւրը եւ խոզակը : Սոսկ վերջինէն տարեկան միջին հաշուով քսան հազար ոսկիի մօտեցող հասոյթ մը կ'ապահովեն Ամասիոյ չրջանակին համար : Այս առթիւ ժողովուրդը բաղդատաբար շատ յառաջ գացած է ճարտարարուեստի կարգ մը ճիւղերու մէջ, մասնաւորապէս մեքենագիտութեան եւ մետաքսի ու շերամի արհեստներուն մէջ : Իբր փակագիծ կրնանք ըսել թէ ժողովուրդին մէջ ջաղացականութեան եւ մեքենագիտութեան շահագործութեան ընդարձակ ասպարէզն առաջին անգամ հոս գաղթող քանի մը տուն Գերմանացիներն եղած ըն, որոնք տեղի տուած են վերջերս Հայերուն : Աշխարհագրական տեսակէտով ալ չրջակայ քաղաքներուն ու աւաններուն — Մարզուան, Ղափղա, Հաճի գիւղ, Հէրէկ, Թօքթ, Զիլէ, Չօրում, Սամսոն — կեդրոն, նաւահանգիստին մօտ եւ նաւահանգիստէն մինչեւ ներսերը տանող ճամբուն կայան ըլլալուն բերումով շատ մը դիւրութիւններով ու շահերով օժտուած է : Ժողովուրդը առհասարակ, դիւրակեցիկ ու գոհ է, աշխատասէր ու գործունէայ, թէեւ ոչ այնքան հետամուտ օրուան նորութիւններուն : Քաղաքակրթութեան տեսակէտով շատ ինքնամփոփ գտնուած է իր բարքերուն, սովորութիւններուն ու հաւատալիքներուն մէջ : Այնքան մօտիկ ըլլալով՝ ծովեղերքի քաղաքներու եւ գերմանուհիներու հետ սերտ յարաբերութիւն ունենալով հանդերձ՝ Ամասիացի կինը փեչէներու մէջ կը պահէ ոչ այնքան վայելչօրէն՝ դէմքը, երբ էրիկ մարդ կոչուած արարածի մը հանդիպի փողոցին մէջ : Հոգ չէ թէ գտնուին կիներ՝ որոնք անպատկառօրէն՝ նստին խումբ խումբ փողոցները իրենց տուններուն առջեւ : Կրթական մասին, չարժեք բան մըսել. քանի որ հին թել մ'է որ պիտի զարնուի իրարմէ աննշան փոփոխութիւնով մը. տարի մը աղէկ, տարի մը գէշ, քիչ մը առաջ, սանկ քաջըլուելով կը շարունակուի արդէն բոլոր դպրոցները ամէն տեղ առհասարակ : Երեք եկեղեցիներ ունի, որոնց չրջափակին մէջ կը գտնուին երկսեռ վարժարանները, որոնք, սակայն անբաւական կուգան հոն դիմող ուսանողութեան : փոխանակ երեք եկեղեցիի, քանի մը վարժարանի յարմար չէնքեր ունենային : Ս. Նիկողոսի եկեղեցիի չրջափակին մէջ գտնուած երկսեռ դպրոցները՝ Իբրանոսեան անունով կը ճանչցուին իսկ գաւառներու մէջ՝ իբր առեւտրական դպրոց մը, որուն համար, բարեսիրաբար տարեկան 200 ոսկիէ

աւելի ծախք մը կ'ընեն 5-6 տարիներէ ի վեր, եւ տարուէ տարի տրամադիր գտնուած են, Մեծ. Իբրանոսեան եղբարք աւելի բարենորոգումներ մտցնելու: Ամասիոյ համար ամէնէն պատուաբեր պարագայ մը կրնայ սեպուիլ: Անոր կից կը գտնուի Ս. Յակոբի եկեղեցին ու դպրոցները: Հոս է նաեւ Առաջնորդարանի դիւանը: Ամէնէն հայաշատ մէկ թաղին մէջ կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին, իր նախակրթարանովը ու ծաղկոցովը: Բոլոր բնակչութիւնը 30,000 կը հաշուուի, որ կը բաղկանայ թուրք, Հայ եւ Յոյն ազգաբանութիւններէ:

Ամասիոյ մէջ շատ չեն կարեւոր շէնքերը, ընդհանուր առումով ճարտարապետութիւնը գոյութիւն չունի, անկանոն փողոցներ, իրարու վրայ խառնիխառն տուններ, անհատնում զառիվերներ: Իբրեւ կարեւոր շէնքեր կրնան յիշուիլ՝ քաղաքին հարաւային կողմը Սուլթան Պաեագիտի մզկիթը հոյակապ շինուածքով, երկու բարձրաբերձ մինարէներով ու ընդարձակ շրջապատով, կեդրոնական մասին մէջ գետին ձախ կողմը կառավարական շէնքը, ժայռի վրայ շինուած ժամացոյցի աշտարակը, նորաշէն զօրանոցը: Հնութեան պատկանող շէնքերուն մէջ նշանաւոր են, քաղաքին ձախակողմը՝ բերդին ստորոտին մօտ Դրզլար կոչուած ապառաժներու վրայ շինուած գերեզմանի այրեր, փորուած սանդուղներ, կամարներ, ներքնուղիներ որոնք աներեւակայելի աշխատութիւններով յառաջ եկած են: Նաեւ քաղաքէն կէս ժամ հեռաւորութեամբ Զէյարէ կոչուած գիւղի ճամբուն վրայ չյնէլի մաղարան՝ որ իր անունը առած է ժայռին տրուած հայելանման փայլունութենէն: Որուն մէջ յունական հին պատկերներ ալ կան: Քաղաքին հիւսիսային կողմը կայ Ս. Յովհաննէսի ուխտատեղին՝ ուր ժայռի մը մէջէն անոյշ. զուլալ ջուր մը կը հոսի: Քաղաքին մէջ կը գտնուի պատմական նշանաւոր անձանց շիրիմներ, որոնց մէջէն կ'արժէ յիշատակել Եօղան պապան, քարայրի մէջ շիրիմ մը, որուն կափարիչին եզերքը քանդակուած պատկերները՝ գեղարուեստական մեծ արժէք կրնան ունենալ: Բերդին վրայ կը գրտնուի գետնափոր ներքնուղի մը որ 5 վայրկեանի չափ վար կ'իջնէ եւ ջուր կը գտնուի ճրլամայօլու անունով ձանօթ. Կէօք մէտրէսէն ալ իբր հնութիւն՝ կարեւորութիւն ունի իր մոմիաներուն համար:

ԱԿԻԿԻՆԷ

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ՄԵՐ ԱՐԵԻԸ

Ի՛նչ մեծ եւ հիասքանչ գիրք մըն է ան՝ Տիեզերքը, որուն մէն մի էջին վրայ Աստուծոյ՝ Գերագոյն ճարտարապետին, անթիւ անհամար հրաշքները կան պարզուած: Դիտենք պահ մը երկինքըն, իր յագնահոյլ, խուռներամ, բիւրեղեայ լուսաւորներովն. ի՛նչ կամար հրաշակերտ լուսափողփող. ո՞վ իմ զարմանալեացս, ո՞ր մէկին նայիմ ակնապիլ: Տե՛ս ուս Արեւը, Ամենիմաստ Հաս-

տիչին մեծութիւնն ու բարութիւնը, վեհութիւնն եւ մեծվայելչութիւնն արտայայտող այդ հրոյ եւ լուսոյ զանգուածը. քննենք, ուրեմն, քիչ մը սա հոյակապ Արեգակնային դրութեան կեդրոնը եղող մեր Արեւը:

Արեւը մեր երկրագունտէն թէպէտ 1,400,000 անգամ մեծ է, սակայն անկէ իբր 93 միլիոն մղոն հեռաւորութիւն ունենալուն համար մեր աչքերուն այնքան փոքր կ'երևի: Արեւին հրաշալիքներէն մին է իր լոյսին իբր 8 ու կէս երկվայրկեանի մէջ մեզի հասնիլը, քանի որ լոյսը մէկ երկվայրկեանի մէջ 180,000 մղոն հեռաւորութիւն մը կը կտրէ: Թնդանօթի ռումբ մը ամենաուժգին արագութեամբ եթէ արձակուի արեգակէն անընդհատ արագութեամբ 1300 տարիէն աւելի պէտք է երկրիս հասնելուն համար:

Ամերիկացի գիտուն մը Արեւին հեռաւորութեանը համար թէպէտ երեւակայական բայց ուշագրաւ բացատրութիւն մը կուտայ: Կ'ըսէ թէ՝ եթէ երախայ մը 39 միլիոն մղոն երկայնութիւն ունեցող բազուկ մը ունենայ եւ առաջին օրէն այդ ձեռքով դպչի արեւին, մանուկը պիտի մեծնայ մարդ ըլլալու եւ մարդն ալեւոր ծերուկ մը պիտի ըլլայ առանց երբեք այրուի գնցում զգալու: Որովհետեւ զգացումները ջիղերու միջոցով ուղեղին հասնելու համար ժամանակի կարօտ են, թէպէտ մարդու մը մատը եթէ այրի խկոյն կ'զգայ, այն պատճառաւ որ զգացումը շատ արագ կ'երթայ ու մարմնոյն վրայ եղած հեռաւորութիւնը գրեթէ ոչինչ է, բայց ճիշդ հաշիւներ եղած են ցուցնելու համար թէ՝ ինչ աստիճան արագութեամբ կ'անցնին մարմնոյն մէկ կողմէն միւսն եւ այս հաշիւներուն նայելով մարդկային ամէնէն երկայն կեանքն ալ բաւական չէ մարմնոյ զգացումը արեւէն մինչեւ երկրիս հասցընելու: Հարիւր երեսուն տարի պէտք է այդ մանուկին մատերուն այրման զգացումն երեւակայեալ այդ երկայն բազուկէն մինչեւ որ հասնի ուղեղին:

Արեւուն հրաշալիքներէն ուրիշ մըն ալ՝ անոր յոգնազան խաւերը կամ արտաքին կերպարանքն է: Եթէ հնար ըլլար որ այցելէինք արեւին՝ նախապէս պիտի մտնէինք լուսաւոր մթնոլորտի մը մէջ որ քանի մը հարիւր հազար մղոն տարածութիւն ունի ամէն կողմէ: Այս միջոցը կը կոչուի Կալ եւ կը տեսնուի միայն ամբողջական խաւարումներու ատեն: Ասոնք կազմուած են լուսոյ մասնիկներէ որք սպիտակ ուղղութեամբ կը տարածուին: Կալին ստորոտը արեգական Քրօմօսօփեր ըսուած խոնարհագոյն մթնոլորտն է, որ քանի մը մղոն տեղ կը բռնէ եւ բոցեղէն սաւանի մը նմանութիւնն ունի, որուն մէջ փոթորիկներ կամ ցնցումներ ալ կը պատահին, որմէ կիզիչ գոլորշիներու զանգուածներ վեր կը ցայ-

տեն մէկ միլիոն մղոնի չափ հեռաւորութեամբ: Քրօմօսֆերէն ետք կուգայ Փօքսֆեր անուանեալ մթնոլորտը որ ամպեղէն պատեան մ'ըլլալ կը թուի արեւին տակ: Փոքր դիտակի մը զննութեամբ իսկ կը տեսնուի արեւին վրայ խաւար բիծեր որոնք խիստ փոփոխական են եւ անկանոն իրենց ձեւերով անանկ որ միեւնոյն բիծը երբեմն կը մեծնայ երբեմն կը փոքրկանայ: Ընդհանրապէս խմբով կ'երեւին արեւին հասարակածին մօտ եւ ոչ երբեք բեւեռներուն մօտ: Այս բիծերն գտնուած է որ 12-14 օրուան մէջ անգամ մը կ'անցնին արեւին սկաւառակէն որմէ յայտնի կ'երեւի թէ 25 օրուան եւ 12 ժամու մէջ արեւն անգամ մը կը դառնայ իր առանցքին վրայ: Ոոյն բիծերու պատճառն թէպէտ գիտցուած չէ, բայց քննութեամբ ցուցուած է թէ անոնք երբեմն կը բազմանան եւ երբեմն ալ կը նուազին: Ասոնց խիստ բարձրացած ատեններ մագնիսական բազմազան խառնակութիւններ տեղի կ'ունենան, շատ անգամ հիւսիսային լոյսոյ երեւումներու հետ միացած: Երբեմն այս մագնիսական խառնակութիւնք միանալով հեռագրական թելերու հետ մինչեւ իսկ հեռագրական պաշտօնեաներ կը բոցավառէին: Սակայն այդ զարմանալի գոռնտը մեր աշխարհին համար չէ միայն: Լուսոյ եւ ջերմութեան այդ պանգուածը երկնային մարմնոց մեծ ընտանիքի մը հայրն է: Նա ինչպէս մեր աշխարհին, նոյնպէս ուրիշ աշխարհներու, զորս մոլորակ կ'անուանենք, եւ անոնց վերաբերեալ արբանեակներու կենաց աղբիւրը հրոյ եւ ջերմութեան վառարանն է: Ո՛հ, մինչդեռ կը դիտեմ հրաշալեաց այս զարմանալի երտութեան վրայ, կարծես թէ հին փիլիսոփային հետ ես ալ կը լսեմ ներդաշնակ երաժշտութիւնն այդ գոռնտերու որոնց յաւիտենական յանկերգն է Աստուած, Աստուած, Աստուած:

Կրպաա

ԿԱՐԱՊԵՏ Գ. ԳՕՃԱՆԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ՆՇԱՆԱԻՈՐ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁՅԻ ՄԵՐ ՕՐԵՐ

ԻՏԱՅԱԳԻ ՆԿԱՐԻՉՆԵՐ

Լը Գօնեմ (1475—1534). — « Լօմպարտական դպրոցի հիմնադիրը » ըսուած է իրեն: Իրապէս՝ կղզիացած հանճար մըն է, որ աղքատութենէն ծնած նահանգին խորը միացած է: Ինքնիրեն ներշնչուած՝ ստեղծած է իր տիպարները: Հեռապատկերի տեսութիւնը շատ լաւ գործադրած է եւ շնորհալիութեան գաղա-

փարը ամէնէն աղէկ իւրացուցած: Եթէ Ռաֆայէլի համար ըսենք « Իտալիոյ առաջին նկարիչը » Գօւէժ Երկրորդը կրնայ ըսուիլ, բայց եթէ Ռաֆաէլ Երկրորդ աստիճանը դնենք, Գօւէժ կը կորսնցնէ իր կարգը: (Գործերը՝ Ս. Կոյսի վերափոխումը, Լէտա Ս. Գաթէրինի ամուսնութիւնը, Քրիստոսի Խաչէն վար առնուիլը):

Ժիօրժիօն. — Ծնած Քասթէլ-Ֆրանքօի մէջ 1478-ին, մեռած 1511-ին, Աննամանելի տաղանդ մը. ինքնիրեն յատուկ կերպ մը ունի ներկայացնելու գէմքերն ու հագոտաները, և պատկերին տալու գոյներու և նկարի շնորհալիութիւն մը: Իր գործերը՝ յատուկ կորովի կնիքը կը կրեն: (Գործերն են՝ Յիսուսի մահը, Մովսէսի ազատիլը, եւլն.):



Լը Թիթիեն. — Ծնած 1477-ին, մեռած Վենետիկի մէջ 1576-ին: Վենետիկեան դպրոցի ամենաբարձր հանճարը. երանգներու թարմութիւնն հրաշալի է, երեւակայութիւնը՝ միշտ զօրաւոր ու ներդաշնակ: Գոյներու գեղեցկութիւնը՝ ամէնէն խիստ դասական նկարիչներուն իսկ մուցնել կուտայ իր գիծերուն թուլութիւնը: (Գործերը՝ Սուրբ Սէրն ու Կիրքի Սէրը, Համբարձում):

Լը Թեմփօրէ. — Ծնած Վենետիկի մէջ 1512-ին, մեռած Վենետիկի մէջ 1594-ին: Առաջին արտագրութիւն մը ունեցած է, որ ամէնուն զարմանքը կը շարժէ՝ եւ կը սքանչացնէ: Իր հեղինակութիւնը, մեծութիւնն ու յանդգնութիւնը՝ Միքայէլ Անճէլօն կը յիշեցնէ, եւ երանգներու ընտրութեան մասին Թիթիենի կը հաւասարի, բայց շատ ներդաշնակ չէ եւ վեհ ճաշակ մը չի ցուցնէր:

Վերօնոյ. — Վերօնայի մէջ ծնած 1530-ին եւ մեռած 1588-ին: Ամենահրաշալի յատկութիւններով օժտուած նկարիչ մըն է. երեւակայութեանը զօրութիւնն ու ոյժը, պատկերներու արտայայտած գաղափարը, եւ երանգներու ճաշակաւոր այլազանութիւնը իր գլխաւոր յատկանիշերն են: Շատ հոգեյոյզ չէ եւ յաճախ նրկարները՝ աւելորդ զարդարանքներով բեռնաւորուած են:

Ֆարաւ. — Երեք հոգի կը կրեն այս անունը՝ Լուի, Օկիւսթին եւ Աննիպալ: Վերջին երկուքը տոգորուած են ընտրականութեան սկզբունքներով՝ զորս իրենց զարմիկը՝ Լուի կը տարածէր Պօլօնիայի մէջ: Միշտ ճգնող մեծ վարպետներու գործերուն նմանելու՝ երեքն ալ շինծու մեծութեան ու վեհութեան մը մէջ մնացած են: (Գործերը՝ Լուի՝ Ս. Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնը, Օկիւսթէն՝ Ս. Ժէրօմի հաղորդութիւնը, Աննիպալ՝ Ֆարանգի ապարանքին զարդարանքը):

Սանգիո (Ռաֆայել.) — Ծնած է Իւրպէնի մէջ 1483ին, մեռած



1520ին Հռոմի մէջ։ Տեսական գեղեցկութեան ինչպէս նաև բնականին մէջ կատարելութեան անժխտելի վարպետը, իր մրցակցին՝ Միքայէլ Անճէլոյի տարազարդ մեծութիւնը չունի, բայց նկարիչի մը պէտք եղած բոլոր յատկութիւնները իր մէջ խտացուցած է հրաշալի համեմատութեամբ մը՝ նկարը ցայտեցնող գեղ մը, երանգներու փայլ մը, գաղափարներու զօրութիւն եւ ծանրութիւն, ըլլայ սիրալիր քաղցրութեան մը, ըլլայ հին դասական վեհութեան մը արտայայտութեան մէջ դիւրութիւն։ « Երկնային նկարիչը » կ'ըսեն իրեն։ (Գործերը՝ Ս. միքայէլ, Ս. Ընտանիքը, Այլակերպութիւնը, եւայլն)։

Անտի սէլ Սարքո. — Ծնած Ֆլորանսի մէջ 1486ին, մեռած 1531ին։ Մին այն վերջին նկարիչներէն որոնք Ֆլորանսի ամէնէն գեղեցիկ շրջանը կը ներկայացնեն։ Նկարի հրաշալիութիւն, արտայայտութեան քաղցրութիւն, պատկերներու տեսական գեղեցկութիւն, երանգներու այլազանութիւն մը որ տեսակ մը շնորհալիութիւն կուտայ իր նկարներուն եւ ուրիշ գուրկ են նոյն դպրոցին պատկանող ժամանակակիցներ։ (Գործերն՝ Տէրունական Ընթրիքը, Աբրահամի զոհը, Յիսուսի մահը)։



Սալվաթոր Բոզա. — Արնէլլայի մէջ ծնած 1673ին մեռած՝ Հռոմի մէջ 1673ին։ Երեւակայտ, եռանդուն և դաժան. ամէնէն աւելի ներգործիկ տեսարաններ, սրտայոյզ գիւղանկարներ գծած է։ Իր գոյները կենդանի են և ունեցած բոլորն յղացումներուն համապատասխան։ Արտադրութիւններուն թիւը անհաշուելի է։ (Գործեր՝ Գիւղանկարներ, Սոկրատի մահը, Հէրո եւ Լէանդր, եւլն.)

Ռօսսէ. — Ծնած Հռոմի մէջ 1492ին, մեռած Պիզոնի մէջ 1546ին։ Ռաֆայէլի աշակերտը, բարեկամն ու ժառանգորդը։ Իր նկարներուն մէջ ամենալուրջ յատկութիւններու քով տեսակ մը աւելն, ուժգնութիւն դրած է, որոնք աւելի ցուցամոլութիւն մը կը մատնանշեն։ « Մանդուի դպրոցին պետը » ըսուած է իրեն։ (Գործեր՝ Զրհեղեղ, Վէնիսա ու Վիւլգան)։



Դ. ՄՐՅՈՒՄ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ



Գարուն է, Տիկին Աղաւնի վայրկեան մը կ'ուզէ պտտիլ, Տիկին Լւգինէ կը կանչէ զինքը. խօսակցութիւնը կ'սկսի:

Կը շարունակուի, արեւը իր շրջանը կ'ընէ. ամառը կուգայ եւ Տիկին Աղաւնի կը շարունակէ դեռ իր խօսակցութիւնը...

Օհ, տղուն, բայց Տիկին Աղաւնի հոն է դեռ, անսպա՛ռ իր յիշատակները պատմելու վրայ:

Եւ ձմեռը կուգայ... Տիկին Աղաւնիին խեղճ շնիկը որ գարնան տիրուհիին հետ դուրս ելած էր, կը մեռնի, բայց չի հատնիր այն երկու խաթունիկներուն երանելի խօսակցութիւնը:

Հիմա, սիրելի պարոններ, ահա ձեզի առաջին նկարն այս կարօտակէզ խօսակցութեան.

Հիմակուհիմա, նկարագրեցէք այս առաջին նկարը: Հետըզհետէ պիտի դըրուին նաեւ միւս նկարները:

Պայմանաժամ մինչեւ ՅՈՒՆԻՍ 1:

Պայմանները նոյն:

Պ. Բ. Ք.

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԻՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ԴՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Իգտամ լրագրին դէմ

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

U224U7JU

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՆՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակի կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ, եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վստառականացի, 24 էջ.

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ Համար

30 ղրուշ

Գաւառաց

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վստառականացի 12 անգամ զատ առնել ուզողը պէտէ վճարէ 12 ղրուշ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պապապեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դոնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլիէրեան
Արթուր, Սարգիս էֆ. Գ. Թաշեան
Արթուր, Պարոյր էֆ. Արզուման
Արթուր, Կարապետ էֆ. Մարգարեան
Արթուր, Տիգրան էֆ. Բրուտեան
Արթուր, Կարապետ էֆ. Գոճեան
Թեքիւր, Ասատուր էֆ. Արսէնեան
Խաբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրիմ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշեան
Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Արվալ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիւմաքիէ, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիրէ, Կ. էֆ. » » »
Տիւրքիա, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն եւ կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակադրոշմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (թահիւս ընել): Նամակադրոշմ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը չհասած թամանակ, երբեք պատասխանատու չենք: